# 28. Իրավախախտումներ

*28.2. Հարկային իրավախախտումներ:* 2002թ. մուտքագրվել է 337 նյութ՝ կապված հարկային օրենսդրության խախտումների հետ և նախորդ հաշվետու ժամանակահատվածի մնացորդի հետ կազմել 344 նյութ: Այդ նյութերն ունեցել են հետևյալ շարժը. 234-ն ուղարկվել է այլ մարմին նախաքննության, 55-ի վերաբերյալ մերժվել է քրեական գործի հարուցումը, նյութերի մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում կազմել է 55 գործ: Մուտքագրված գործերով առնչվել է 350 մարդ, հետաքննությունների ընթացքում վերականգնվել է 74.3 մլն. դրամ:

Հարկային իրավախախտումների ցուցանիշները

| | 2002թ. | | | |
|---|---|---|---|---|
| | ընդա-մենը | աճը կամ նվազումը 2001թ. համեմատ (նվազումը «-» նշանով), % | աճը կամ նվազումը 2000թ. համեմատ (նվազումը «-» նշանով), % | աճը կամ նվազումը 1999թ. համեմատ (նվազումը «-» նշանով), % |
| Մուտքագրված նյութերի քանակը | 344 | 2.0 անգամ | 2.1 անգամ | 2.1 անգամ |
| Գործերով առնչվող անձանց թվաքանակը | 350 | 90.2 | 2.2 անգամ | 2.2 անգամ |
| Հետաքննության ընթացքում վերա-կանգնված գումարը, մլն. դրամ | 74.3 | - 2.4 | 2.0 անգամ | - 89.4 |

Հարկային իրավախախտումների ցուցանիշներն ըստ եռամսյակների, 2002թ.

| | I եռամսյակ | II եռամսյակ | III եռամսյակ | IV եռամսյակ |
|---|---|---|---|---|
| Մուտքագրված նյութերի քանակը | 74 | 65 | 84 | 121 |
| Գործերով առնչվող անձանց թվաքանակը, մարդ | 74 | 68 | 85 | 123 |
| Հետաքննության ընթացքում վերականգնված գումարը, մլն. դրամ | 11.2 | 12.3 | 29.4 | 21.4 |

Հարկային իրավախախտման գործերով առնչվող անձանց թվաքանակի բաշխվածությունն ըստ հանցատեսակների, 2002թ.

| | Գործերով առնչվող անձանց թվաքանակի բաշխվածությունը, ընդհանուրի նկատ-մամբ, % | 2002թ. աճը կամ նվազումը 2001թ. համեմատ (նվա-զումը «-» նշանով), % |
|---|---|---|
| Հարկային վճարումների պարտավորությունները կատարելուց հրաժարվելը կամ չարամտորեն խուսափելը | 44.3 | 37.2 |
| Հարկային դրոշմանիշներ օտարելը կամ ապօրինի ձեռք բերված հարկային դրոշմանիշներով ապրանքներ դրոշմավորելը | 14.8 | 10.4 անգամ |
| Հարկային դրոշմանիշներով դրոշմավորման կանոնները խախտելը | 12.0 | 2001թ. նշված գործով անձինք չեն արձանագրվել |
| Հարկային դրոշմանիշներով չդրոշմավորված ապրանքներ իրացնելը | 11.1 | 2.8 անգամ |
| Ապօրինի ձեռներեցությամբ կամ ապօրինի բանկային գործունեությամբ զբաղվելը | 10.9 | 11.8 |
| Հարկային տեսչության կամ կենսաթոշակային և զբաղվածության հիմնադրամի մարմինների պաշտոնատար անձանց ծառայողական գործառույթներին դիմադրելը | 4.0 | 2001թ. նշված գործով անձինք չեն արձանագրվել |
| Հարկային դրոշմանիշներ կեղծելը կամ կեղծած դրոշմանիշներ օգտագործելը կամ իրացնելը | 0.6 | 2001թ. նշված գործով անձինք չեն արձանագրվել |
| Այլ հանցագործություններ | 2.3 | 0 |